


Ձեր ազգագույն խերթի միջոցաւ տեղւոյս ազգայնոց նկատմամբ հրատարակեալ թղթակցութիւնները անտարակոյս խիստ բարի տրուողութիւն ըրին ձեր ամէն ընթացողաց՝ վրայ, Բայց կարեոր է նաև յիշել թէ ամէն ինչ որ կը փայլի, ոսկի է, չոս կան իր քանի չափեր Բք բարեկամներու օգնութեամբ տեղս հասնելով՝ իրենց ձեռաց մէջ չափաւոր դրամագլուխ ան դրուելով յաջողած են, կա նաև մեծամասնութիւն մը ալ որք ատանց բարեկամաց օգնութեան և դրամագլխի եղած են և այսօր ուրիշ ամէն տեղէ աւելի անյաշող վիճակի մէջ կը գտնուին, Ուստի միշտ ոք պարտ է կործնել թէ ձերքն ըսելը անպարտաւոր յաջողութիւն է, Տեղս կան չայ գործաւորներ որք երկու կամ երեք տարիներէ ի վեր եկած են և շատ շղջացած են եկած ըլլալուն համար, և ասոնցքէ շատերը գործ չի գտնուել նուն պատճառաւ, ետ երթալ պարտաւորեցան, Մարդ մը եթէ միայն գործաւորութիւն ընելու համար գայ, վիճակը շատ բազմալի չի կրնար ըլլալ, զի տարւոյն մէջ չիմք ամօր միայն կրնայ գործել, և մնացեալ եօթն ամիսը պարտաւոր լաւ հաճէն աւելի ծախսել կը պարտաւորի, Հետեաբար, ասանց հողատէր կտրենալ ըլլալու չայու մը հոգալը, Իրջանկութիւն չի կրնար ըլլալ, զի գործարարներն ալ չկան Նիտ Եօրքի, Ուսթըրի, կամ ուրիշ արևելեան քաղաքաց պէս, որ անոնցմ միոյն մէ գետնազուելով գործեն և ստակ աւելցնեն, Ազգասէր չայ մի ըլլալով, և Թրէշնօր մէջ քիչ չափ Իրձառութիւն ունենալով, պարտ կզգամ յիշեցնել որ անգործ և անգրամագլուխ չայերու համար հոս յաջողութիւն չ'սպասեք. տար բեր խնդիր է որ դրամ ունեցող ազգայնեք հոս գալով հողասկր լինին և իրենց կրօնած գետինը կարենան չահագործել, Երբ մեր Հայերէն շատերը Տաճկաստանէն կուգան 20 լիռան, տարիէ մը 28 լիռա տարագրածնելու պայմանաւ փոխ առած են, Եթէ ատոնք չուշ չերին ուղակի Թրէշնօ առնեն, տարին 8 ամիս գործելով չէ, այլ 16 ամիս գործելով իսկ այդ դրամը կարող չի պիտի ըլլան զտարել, և պիտի թըլառանան, և նո ա հոս գալուն համար պատճառ եղողները անոնց բերնէն շատ տրտունջ պիտի լսեն, Եթէ անգործ չայոց վիճակ մը վրայ ցաւող մարմին մը կայ, նախ պէտք է որ այդ կողմերը անոնց գործ գտնեն որ ստակ չահին, և իրենց ծանր տոկոսով պարտքերը վճարեն և այնուհետեւ իրենց համար ստակ ունենան. և որոշեն տեղս գալ ընակիլ. այն ատեն կրնան բարւոքել իրենց սպագայները:



Ս
Պրատարակուի երկու շաբաթը
անգամ մը, Հինգշաբթի օրեր:
Խմբագիր եւ Տէր,
ՓԱՌՆԱԿ ՄԱՏԹԵՆՈՍ ԱՅՎԱՏԵԱՆ:

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԻԱԳՐՈՒԹԵԱՆ
(Բաժնի տուրքէ ազատ):
Միացեալ Նահանգաց Համար,
Մէկ տարեկան 2 տօլար,
Կէս 1 »
Օտար երկիրներու համար,
Մէկ տարեկան 12 շիլլին,
Կէս 6 »

Բաժանորդագիրք կանխիկ վճարելի են. և կրնան յղուիլ փոխանակագրով, Բոսթօն կամ Եքսթրէմի գրքամի հրամանով և կամ վաւերացեալ նամակով:

Թղթակիցներէ կը խնդրուի իւրեանց ստանձնած հրապարակային անուն հետ բուն անուններն ալ խմբագրութեան գրեցնել, չէ թէ հրատարակութեան, այլ վստահութեան համար:

Ձի հրատարակուած գրութիւնք ետ չեն դարձուիր որ և է պարագայի ներքէ:

Ուղղել ամեն գրութիւնք առ
THE ARABIAN,
No. 100 Centre Street,
NEW YORK.

ՆիՌԻ-ԵՕՐԻ ԵՇ. ՄԱՐՏ 26. 1891.

« Բոլորովին անյոյս բան է ակնկալել որ Դուռը երբեք քաղաքակրթեալ Կառավարութեան մը պարտականութիւններն պիտի կատարէ Թրքական Կայսրութեան այդ Փոքր Ասիոյ) մասանց մէջ: Թրքական վարչութիւնը թէ պիտի և թէ տկար է, և այդպէս պիտի ըլլայ մինչև որ վերջը գայ: » — Արկայիլ Դուրքը, ի Միթիլինկին Մանչեսթըրի, Նոյ. 25, 94

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ
Հոգաբարձութիւնն մի գովելի ձեռնարկութիւն կընէ ինչպէս ուրիշ սիւնակի մը մէջ ծանուցումէն պիտի տեսնուի, գրասենեակ մը հաստատուելու և տեղւոյս գաղթականութեան բարոյական պէտքերն հոգալով, Նաև տուած մը հաստատած է անգործ ազգայնոց համար գործ գտնել ջանալու: Ուրախալի է որ Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնն իւր առ ժողովուրդն ունեցած պարտականութեանց կատարման գործնական ապացոյցներ կուտայ, և իրաւունք ունի հաւատարմութեամբ ժողովրդեան կարող մասն ալ կարելի միջոցներով նեցուկ պիտի պիտի ըլլայ Հոգաբարձութեան իւր այս կարևոր ձեռնարկին մէջ:

ՊԱՐՏ ԿԶԳԱՐԻ ՄԵՐ ԸՆԹԵՐ-
ցողաց ներողամտութիւնն խնդրելու ԱՐԱՐԱՏԻ վերջի երկու թիւերը որոշեալ թուականէն մէկ կամ երկու օր ուշ հրատարակուելուն համար: Այս բան, ինչպէս ուրիշ առաջ թիւ ալ ծանուցանել պարտաւորած եմք, տեղւոյս մէջ միակ Հայերէն տպարանին անբաւականութենէն յառաջ եկած է, և այս չարեայ առաջին առնելն մեր ձեռնհասութենէն վեր գտնուած է:

Բայց սակայն, այժմ այն տըպարանին վրայ յաւելուածներ լինելով, տեղի ունիմք հաւատարմութեան մեր ընթերցողներն, որ յառաջիկայ թիւէն սկսեալ ԱՐԱՐԱՏ ճիշդ ժամանակին իւր ընթերցողաց ձեռքն պիտի հասնի:

ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ
ԱՐՄԱՆ:

ԱՐԱՐԱՏ իւր ներկայ թուով կսկսի Զիգուի Սիլարհասանի գէսին վրայօք տեղեկութիւններ տալ, և այդպէս պիտի շարունակէ ընել ամէն թուով, քանի որ այդ հանգէսը յառաջանայ, Փափաքելի է որ Հայ արհեստավարք, վաճառականք, դրամատէրք, և գործօնք ևւսօգտուին Նոր Աշխարհի այն մեծ ձեռնարկէն, որ ներկայ դարուս քաղաքակրթութեան պատմութեան մէջ գլխաւոր տեղ մը պիտի բռնէ:

ՅՈՅԺ ԲԵՐԿՐՈՒԹԻՒՆ ԱՌԻԹ
մը է Ամերիկեան Հայոց համար տեղեկանալ թէ Ամենայն Հայոց Հայրապետ Վեհափառ Մակար Սրբազան, Կաթողիկոս պատուոյ խաչ մը նուիրած է առ Նահանգաց հովիւ Արթ. Յովսէփ Ծ. Վրդպոս. Սարաճեան, ի նշան նոր ազգօգուտ ծառայութեանց, Արարատ ջերմագին կը շնորհաւորէ զնորին Արժանապատուութիւն, այս առթիւ, և վստահ կը զայն որ բարի հովուին հոգն ու ինամբը ինչպէս անցնելոյն նոյնպէս և ապագային մէջ պակաս չի պիտի ըլլայ իւր հօտին վրայէն:

ՅԱՆԱԼԻ ԲԱՆ Է ՈՐ ՏԱԿԱԻՆ
կը գտնուին մեր մէջ կարգ մը անձինք որք իրենց երկրին մէջ ունեցած փորձառութիւնը փոխանակ բարի նպատակաւ գործածելու, զայն իբր միջոց կը գործածեն իրենց համարին եղբայրները կողմանելու:

Այդ նիւռ Հէմբըյը գտնուող անձը որու ով ըլլալը յակնէ անուանէ մեզ դիտողութեամբ է, պէտք էր ամենալայ 16 անձերու գործ գտնելու համար ձեռք բռնէ 25 կամ 30 ական տօլար խելու: զի այդպիսի ծառայութեան մը համար այդպիսի գին մը ոտանալը անիրաւութիւն է: Աւելի գէշն է այդ չափ մը ձեռք ձգել յաջողութեամբ սըտախօսութիւնն ալ գործիք ընել և գործատէրն խաբել սրպէս զի իւր կողմովու գործն կարենայ հաստատ հիման մը վրայ դնել:

Այդ պարոնն պէտք է յիշէ որ այս երկրին մէջ օրէնք և արդարութիւն իրենց բուն նշանակութիւններն ունին և եթէ կը կարծէ թէ իւր ընթացքը մէկը չի կրնար քննադատել և զինքը ուղղութեան բերել՝ կը սխալի: այդպիսի արարքներու շարունակութիւնն կրնայ գեղեցիկ առաւօտու մը իւր գտնուած տեղին ընդհանուր—գաղափարին հետ երես առ երես բերել զինքը:

Պարոն, այդ երկու անգործ ազգայնոց այդ գործարանին մէջ գործ ստանալուն արգելք մի ըլլաք, և այդ գործարանատիրոջ ձեռ տուած սխալ տեղեկութիւնները շտկեցէք: Կիմանաք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՌՈՒԹԻՒՆ ԻՆՉ-
պէս ուրիշ սիւնակի մը մէջ գտնուած ծանուցումէն պիտի տեսնուի, իւր հինգերորդ տարեգարձն կը տօնէ Ապրիլ ամսոյ 25 ին:

Ամերիկեան Հայ ընկերութեանց այս նախաձեռնութիւնը, որ վարդանանց հանգէսն և իւր տարեգարձն ի միասին կը տօնէր, ըստ պահանջման իւր օրինաց, այս տարի այդ օրինաց մի մասը լեցուած կը համարի, վարդանանց հանգիսին ընդհանուր Գաղթականութեան մի Յանձնախումբին ձեռամբ տօնուելով և կուգայ իւր տարեգարձն կատարել մի ընկերական հանգիսի, որ կը խոստանայ հաճելի երեկոյթ մը ըլլալ Հայ ընկերական տեսակէտով: Կարգադիր Մասնախումբն ընտիր բողոքամ մը պատրաստած է այն երեկոյթին համար զոր պիտի հրատարակեմք «Արարատ» յ: չորդ թուով:

ԳՐՈՐ ԵՒ ԳՐՈՐԾՈՐՔ:
Տես Արարատ թիւ 8.
Բ.

ՄԱՆՐԱՎԱՅՈՒԹԻՒՆ:

Նիւռ Եւրօք բաղմամբ քաղաք մի է և վերջի մարդահամարին հաշուեց 1, 513, 501 հոգի: Հաղարաւոր անձինք ամէն օր այս քաղաքը կը մոնեն և նոյնչափ ալ գուրս կ'ենեն: Վերջպէս Աւստրիական այս մեծ աշխարհին ամենամեծ վաճառաշահ քաղաքին մէջ ամէն կարգի գարծունէից համար ապրուստ մը հայթայթելու միջոցներ գտնուելու են: Մեր Հայերէն սմանք ինչո՞ւ չեն կրնար քաղաքի խառնալ կեդրոններուն մէջ պզտի առուտուներն ընել և առնոց մէջէն գործունէայնքը իրենց օրական ապրուստը ճարել ի զառ իրենց ապագայն ալ պատրաստել: Արդեօք Գերմանացւոց խաղաղացող իրաւասցւոց, Ուկրաինացւոց և Հրէից չափ բանիներ կը պակսին մեր մէջէն: Կամ թէ անոնց չափ գործադիտութիւն ունեցողներ չկան մեր Հայ եղբայրք մէջ: Մեր փորձառութիւնն կընէ թէ կան: Բայց միայն երկու բան կը պակսի անոնց քով: Յանգիստութիւն և դրամագլուխ: Ասոնց առաջինը փորձառու մարմնոյ մը այդ անձանց տալիք խրատովը կրնայ գոյացուիլ: Իսկ երկրորդը գաղթականութեան կարողազոյն մասին կողմանէ ամենազոյն զոհողութեան մը կը կարօտի:

Հինգ հարիւր տօլարի դրամագլուխ մը կրնայ 20 կամ 25 ժիւր և փութաշահ չափայնոց իրենց օրական ապրուստը ճարելու և ապագայն կանգնելու հիմ մը ըլլալ: Եւթագլուխ մը թէ 10 կամ 20 ազգայնոց մէջ այս գուրմար գոյացուեցաւ: Գտնի այն ազգայինները որոնց գործունէութեան և հաւատարմութեան վրայ կրնան վստահանալ: Հասկնալ թէ ամէն բանէն կը հասկնայ և կամ իւր փրկատնայ եղբայրք և ազատագոյն մարդկութեան հետ ծանօթանալու պատիւն ունեցած՝ և գէթ մասամբ իւր նոցա համակրութեան արժանացած եմք:

Բայց ինչո՞ւ համար է որ Հայն և Թուրքն այսչափ դարբեր կրցած են գէշ կտու աղէկ իրարու քով ապրիլ և հիմայ կըսուի թէ այդ բանն անկարելի է և կամ պիտի ըլլայ: Այս պարզ խնդիրն ալ կարենալ ըմբռնել ըմբռնելու համար ո՞չ բարձր տաղանդ պէտք է և ոչ անսահման խմբակցութիւն: սովորական խմբակցութեան, արհեստից, գիտութեանց, ուսմանց, և ընկերական կենաց մէջ աւելի յառաջ գացած է քան թէ իւր դրացի ցեղերն և ազգերը, և եթէ ունենայ առաւել միջոցներ, և բարձուն իւր գէմէն խառնի և ազգայնութեան մէջ ըրած յառաջադիմութեամբ:

վրայ կրնան վստահանալ: Հասկնալ թէ ամէն բանէն կը հասկնայ և կամ կրնայ վաճառել, Կարգադիր մի բանի մեծ քանակ վաճառատանց հետ որ այս անձանց մինչև 15 կամ 20 տօլար արժողութեամբ ապրանք վստահանան, և յատկացուի իրենց 5 տօլարի չափ անկիւն մը կամ տեղի մը գտնելու, և կամ իւր վաճառքը մէջը կարենալ պարտեղելու համար ինչ մը հայթայթելու: Թո՛ղ չըջաղայի ուր որ կրնայ, վաճառէ ինչ որ որու որ կրնայ, և վճարէ իրեն վստահացեալ դրամագլուխն ի հաշիւ շարժական մէկտօլար իսկ մնացեալովն վերստին ապրանք ստանայ իրեն ցոյց տուած վաճառատունն: Չեմք կրնալ կարծել որ այս մարդիկ պիտի կարենան ապրիլ և մինչև 25 շաբաթ իրենց նախնական պարտքն վճարած ըլլալէ ի զառ, իրենց սեփական դրամագլուխն ալ ունենալ: և մինչև այն ատեն առեւտրական կեանքի մէջ եփած ըլլալով սկսին հսկայաքայլ յառաջանալ և անկախօրէն կանգնել իրենց ապագայն: Մեք կը հաւատամք թէ տեղւոյս Հայոց մէջ որչափ որ դանդաղեն կանոններ չափ ալ կան արթուն և գործունէայ մարդիկներ, որք միայն քիչ մը բարի խրատի և քաջալիքութեան՝ և քիչ մը ալ սկզբնական միջոցի կը կարօտին: Տո՛ւր անոնց պատեհութիւնն մը, և անոնք ալ ապագային մէջ ուրիշներուն պիտի տան պատեհութիւններ:

Օ Ր Ո Ւ Ա Ն Ի Ն Դ Ի Ր
ԲԱՐԵՆՈՐԳՈՒՄ Ի ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԱՅ ԳՐՈՐԾՈՒԹԻՒՆ:

Տարակոյս չկայ որ այսօր Թրքա—Հայաստանի ամօթալի վարչութեան խնդիրը ալ ևս կարենալ ծածկուելու աստիճանէն անդին անցնելով, քաղաքակրթեալ աշխարհի ուշագրութեանն առարկայ եղած է, և թերևս ապագային մէջ ալ նորա գործնական միջամտութեան տեղի տայ: և կամ, առ նուազն, այդ է Հայ կական ազատ մամլոյն և Հայ հայրենասիրաց փափաքը:

Ուրիշ խօսքով, մեք Հայերս նախորդ դարերու միջոցներէ մէջէն, հիթանոսութեան կեդրոնին մէջ, հակառակ ամէն հաւածանաց, արշաւանաց, ընկճմանց, քանդմանց և հարստահարութեանց, մեր գոյութիւնն, ազգութիւնն և եկեղեցին պահպանել յաջողելէ ետեւ, ընդմիտեալ չեմք զգար ասոնց ամէնը կորսնցնելու ասկէ յետոյ, քանի որ հիմայ ամէն ժամանակէ աւելի մեր Քրիստոնեայ եղբայրք և ազատագոյն մարդկութեան հետ ծանօթանալու պատիւն ունեցած՝ և գէթ մասամբ իւր նոցա համակրութեան արժանացած եմք:

Բայց ինչո՞ւ համար է որ Հայն և Թուրքն այսչափ դարբեր կրցած են գէշ կտու աղէկ իրարու քով ապրիլ և հիմայ կըսուի թէ այդ բանն անկարելի է և կամ պիտի ըլլայ: Այս պարզ խնդիրն ալ կարենալ ըմբռնել ըմբռնելու համար ո՞չ բարձր տաղանդ պէտք է և ոչ անսահման խմբակցութիւն: սովորական խմբակցութեան, արհեստից, գիտութեանց, ուսմանց, և ընկերական կենաց մէջ աւելի յառաջ գացած է քան թէ իւր դրացի ցեղերն և ազգերը, և եթէ ունենայ առաւել միջոցներ, և բարձուն իւր գէմէն խառնի և ազգայնութեան մէջ ըրած յառաջադիմութեամբ:

են գէշ կտու աղէկ իրարու քով ապրիլ և հիմայ կըսուի թէ այդ բանն անկարելի է և կամ պիտի ըլլայ: Այս պարզ խնդիրն ալ կարենալ ըմբռնելու համար ո՞չ բարձր տաղանդ պէտք է և ոչ անսահման խմբակցութիւն: սովորական խմբակցութեան, արհեստից, գիտութեանց, ուսմանց, և ընկերական կենաց մէջ աւելի յառաջ գացած է քան թէ իւր դրացի ցեղերն և ազգերը, և եթէ ունենայ առաւել միջոցներ, և բարձուն իւր գէմէն խառնի և ազգայնութեան մէջ ըրած յառաջադիմութեամբ:

Այս բան կատարելապէս ապացուցուած է, ինքզինքն քաղաքակրթեալ կեդրոնի մը մէջ կրցող նեղող անհատներու՝ րահաստից, գիտութեանց և վաճառականութեան մէջ ըրած յառաջադիմութեամբ:

Միւս կողմանէ Թուրքն, Արաբն, Քիւրտն ևն. որք բարձր վարչութիւն մը վստահութեամբ կարենալ զատելու չափ կարողութիւն տակաւին չեն կրցած ունենալ, որոնց կրօնքը մագրէին փոխանորդին միայն կոյր հրահանգութիւն կ'ուսուցանէ որք միայն կը հաւատան թէ ամէն ինչ անկէ կը բխի, և առ այն է որ իրենց կեանքն, պատիւն և ինչքն պարտին, այսօր քաղաքակրթութեան ընթացքին մէջ ամենափոքր քայլ մը առած չըլլալէ ի զառ, յստակ գաղափար մը իսկ չեն կարողացած կազմել նորա ինչ ըլլալուն վրայօք: Ձի եթէ այդ բարեբաղդութիւնն ունեցած ըլլային այսօր Թուրքիա տարբեր, վարչութեամբ կառավարեալ տարբեր երկիր մը պիտի տեսնէինք:

Պէտք է յիշեմք նաև թէ՛ ազգաց քաղաքակրթութեան և յառաջադիմութեան հետ, հրահանգին վարչական դրութիւններն, որք ժամանակաւ գոհացուցիչ համարուած էին, փոխուելու և լաւագոյննորա տեղ հաստատուելու պէտքն կենսական եղած է: և այնչափ կենսական՝ որ գրեթէ ամէն պարագայի մէջ բազմաթիւ կեանքեր զոհուած են այդ բանն ձեռք բերելու համար: և ժողովուրդն չէ հանգաբարձ մինչև որ զայդ ունեցած է:

Ուստի, քանի որ Հայն այդ բարեփոխման անհրաժեշտ պէտքին մէջ կը գտնուի այսօր, իսկ Թուրքն տակաւին այդ աստիճանին կարենալ հասնելու առաջին նշանակն ցուցած չէ, հակառակ ամէն ջանից և խրատուց իւր դրացի տեղութեանց, պարտ է յուսալ որ օր մը Հայ, Թուրք, Արաբ, Քիւրտ և Ձէրքէս իբր եղբայր զիրար գգուեն: Թուրքը իւր անցեալ և ներկայ վիճակովը կրնար իրեն չափ

տգիտութեամբ և նախապաշար-
մամբ լեցուած ժողովուրդ մը
իւր ոտից ներքեւ պահել, սուրն
ի ձեռնն ունեցած ըլլալուն հա-
մար, չի կառավարուիլ կամ չի ա-
ռավարուիլ տարբերութիւն չէր
ընէր այդ ժողովուրդեան: Բայց
երբ այս վերջինը կսկսի զգալ
թէ ինչ ըսել է իւր մարդ տա-
րիւ, ինչ ըսել է մարդկային ընկե-
րութիւն, և ինչ ըսել է պատուոյ
կենաց և ընչից տպահովութիւն,
այն ատեն կենսական կըլլայ
վարչական լարուածման պէտքը: և
այդ պէտք է գայ, ինչ որ ալ
արժէ:

Իրայ այս վիճակին մէջ, զոր
կը հաւատարմը որ լատ. բմութե-
ութեւն է աղբի փճի քաղցրութե-
ւնը, և կ'ԱՐՈՂ մամլոյն կող-
մանէ, պէտք է ժողովուրդն ալ
յատկորէն բմութեւն թէ ինչ է
իւր պահանջը, և ինչ թելադ-
րութեանց հաւատ պէտք է ըն-
ծայէ: Հայ ազգի լուսնի փոր-
ձառութեամբ համոզուած է թէ
հաւատարմութեամբ անձնուր-
ցութեամբ և մտեղմութեամբ որ-
քան կրնայ ակնկալել թաւր
մարմնէն. և հիմա որ թրքական
բարեխնամութեան (°°°) գուր
վնասել սկսած է իւր գլխուն
ճար, և կ'առարկալ աշխուշու-
թիւն և խիստ զգուշութիւն
պէտք է որ ունենայ իւր ամէն
շարժմանց և գործոց մէջ, մի-
գի թողելով ամէն կարծեցեալ
դարձմաներ և փոփոխական սկզ-
բունք որք կրնան որ և է քամի
վնասել իւր նեղութիւն: զի այսպի-
սի նուր պարագային զի այսպի-
սի նալ քայլ մը աննկատ յաւի-
տենակուն յաճանք մը պիտի
ըլլայ աղբին և նորա առաջնոր-
դաց:

ՀԱՅԵՐ Ի ՆԻՈՒ ՀԻՄԵՐՈՅԻ:

Գոնգորտ, Մարտ. 22, 1891.
Գրեթէ 3 կամ 3 ամիս է ի վեր
է որ նահանգիս մէջ Հայեր կը գը-
տնուին որոց թիւը տասն և ութի կը
հասնի: Ասոնց տասն և վեց այժմ
կաշի գործարանի մը մէջ կը գործեն,
որ է բաւական աղտոտ գործ մը:
Այս անձինք հոս բերուած են Պր.
... և ձեռքով որ իւրաքանչիւրին
առած է երեսուն կամ և քսան հինգ
տոյար զանաւոր այս գործարանին
մէջ գետեկերէն համար: Գործարա-
նատիրոջ հետ ալ մասնաւոր կա-
պակցութիւն մը հաստատած է հա-
մագելով թէ ինք բարեգործական
ընկերութեան մը նախագահն է
և ներկայացուցիչն է, և հոգն ունի
Հայ արժանաւոր գործարարաց եւ
աղքատաց նայելու: Եւ այս կար-
գաբարութեամբ յաջողած է առանց
իւր յանձնարարութեան Հայ գոր-
ծաւոր առնել չտալ այդ գործա-
րանին մէջ:

Այժմ հոս երկու Հայեր կը
գտնուին որ անգործ են: Սոքա
գործարանատիրոջ աղաչելին և պա-
ղատեցան որ իրենց գործ տայ: Նա
կառարկէ թէ ինչ նախ պարտ են հաճե-
ցնել զՊր. ... որպէս զի ինք կա-
րենայ իրենց գործ տալ: Իսկ Պր.
... անտարակոյս իւր հաճութիւնն
չի տար առանց իւր պահանջած ա-
նկրաւ գումարն ստանալու:

Ահա այսպէս է տեղոյս Հայոց
վիճակը: Եւ ես Արարատի միջո-
տեղեկանալով որ Հայ գաղթականաց
բարօրութիւնն մասնաւոր ուշադ-
րութեան առարկայ եղած է, պարտ
զգացի ներկայ գրել որպէս զի տե-
ղեկանալ թէ ինչ ձևով Հայեր ինչ
գործադրութեանց կը զատապարտ-
ուին նոյն իսկ իրենց Հայրենակցաց
ոմանց կողմանէ: և ճար մը ընէք որ
ասանկ մարդիկներ արգելք չըլլան
աղքատ գործատուներու իրենց որա-
կան հացը ճարելուն: Եւ եթէ կա-
րելի է զսպել այսպիսի խաբար-
ներն և դադարեցնել իրենց հայրե-
նակցաց շարքը հասցնել և զանոնք
կողմակցել:

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԲԱՐՈՒՄԵՆԻ

ՀԱՍԱՐԱԿԱՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Մարտ 5 1891.

Մր. Լեվիզըն կառուր հարցուց
Արտաքին գործոց ենթաքարտուղա-
րին թէ արդեօք իրա՛ւ էր որ, թէ-
պէտ ըստ Հիւպատոս Լօյտի Հոկտեմ-
բեր 2, 1890 թուականաւ տեղեկու-
թեանց, Յունիս 20ի խռովութեանց
պատճառաւ չ'աւ մը Գրիստոնեայ-
ներ երկար ժամանակ բանտի մէջ
պահուած էին առանց իրենց գէմ
ամրաստանութիւն մը գտնուելու:
Բայց հակառակ կոստանդնուպոլսոյ
Բրիտանական և Գաղղիական ներ-
կայացուցիչներու կրկնակի ցոյցե-
րուն և Մեծ-Եպարքոսին խոստ-
մանց, որ և է դատաստան բացուած
չէր թրքական կառավարութեան
կողմանէ Մաճմէականաց գէմ նոյն
օրը զԳրիստոնեաներն ջարդելուն
և կողոպտելուն համար: և եթէ
այդպէս էր, Ն. Վ. Թագուհւոյն
կառավարութեան Դեսպանին հրա-
հանք պիտի տրուէր գիւղուն ստի-
պել այդ խոստմանց կատարման
համար, որպէս զի երգրուած և չը-
ջակայ գիւղորէից Գրիստոնեից ա-
պաշովութիւն:

Սըր ձեյմս Ֆրեյզըր. — Որչափ որ
գիտեմք, որ և է դատաստան բաց-
ուած չէ: պիտի հարցուի թէ այդ
գործին մէջ Դուռն ինչ քայլ առնել
կը խորհի:

ԼՕՐՏԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Լօնտըն, Մարտ 9. 1891.
Լօրտ Սմիթթիլըն էստ Գաւ-
պէլ ուշադրութիւն հրաւիրեց թուր-
քիոյ նկատմամբ եղած թղթակցու-
թեանց վրայ և խնդրեց որ առաւել
ևս տեղեկութիւններ տրուին Արե-
ւելեան խնդրոյն վրայ: Նաեւ
հարցուց թէ 1877 ինչ հաստատ-
ուած և ի վերջոյ դադարեցուցուած
երեստիսական վարչութիւն մը
ներկայ վարչական դրութեան լա-
ւագոյն չէր կրնար ըլլալ թուրքիոյ
մէջ: Մուսա Պէյի դատաստանը լա-
ւական ապացոյց մը եղաւ ներկայ
գրութեան ուղղութեւն կարողութե-
անը: Բրիտանական դեսպանու-
թիւնն առաւել գործունէութեամբ
կրնայ աշխատել Հայկական շարժ-
ման նկատմամբ: Եթէ հարկն պա-
հանջ մասնաւոր պատուիրակու-
թիւն մը կրնայ զրկուիլ թէ պէտք ոչ
կատարիւ յոյժութեան յոյսով:

Լօրտ Սայվալըն ի պատասխանին
յայտարարեց թէ առիւ Լօրտն գո-
վասնօք խօսեցաւ 1877 երեստի-
սական ժողովին վրայ, որու
ճիշդ ինչ մեծագործութիւն ըրած
ըլլան ինք յիշեր: Միտհաթ Գալա-
յի վրայ իւր լսածներուն նայե-
լով, չէր հաւատար որ ուրիշ Մեծ-
Եպարքոս մ' ալ կամենար նորա
գրիստիկն հետեւիլ: Զի Միտհաթի
ընթացքը շատ դժբաղդ կերպով
վերջացաւ: Առանց պաշտօնապէս
ըսել համարձակելու թէ Կ. Պօլսոյ
մէջ երեստիսական մարմիններ
ըլլալու են թէ ոչ, կրեմ թէ այդ
մեր գիտնալու բանը չէ: Արեւել-
եան խնդրոյն նկատմամբ կան ուրիշ
թղթեր ևս որք զիչ օրէն պիտի
ներկայացուին:

ԳՕԼՕՄՊԵԱՆ

ԱՇԽԱՐՀԱՆ ԶԱՆԳՆԵՐԻ

Ի ԶԻՔԱԿՕ.

Միացեալ Նահանգաց Նախա-
գահին հանած մի հրովարտակը վերջ-
նականապէս հաստատած է Գօլօմ-
պոսի Ամերիկան գտնուելուն չորս
հարիւրերորդ տարեգարծին Ձիգա-
կօի մէջ աշխարհանդէսով մը տօ-
նելուն համար Միացեալ Նահանգաց
Գօնկրէսին տուած որոշումը: Այս
աշխարհանդէսին մէջ ի ցոյց պիտի
դրուին գեղարուեստը, արհեստա-
կերտը, ձեռակերտը, և հողային,
հանգային և ծովային արտադրու-
թիւնը: Աշխարհի ամէն օտար ազ-

գեր Նախագահին կողմանէ հրաւիր-
ուած են այս հանդէսին մասնակցե-
լու: Գօլօմպոս Սան Սալվատոր կըղ-
զին կողմէ 1492 թուականին, Բայց
աշխարհանդէսը չի պիտի բացուի
մինչև 1895: որպէս զի այս տօնա-
խմութիւնն ճիշդ չորրորդ դարի-
դարձին դայ, գործը երկու արարո-
ղութեանց բաժնուած է:

Օրինօք սահմանուած է որ չէն-
քերը 1892ի Հոկտեմբերի տասն և
երկուրդ օրը պատշաճաւոր հանգի-
սիւ նուիրագործուին: և այսպէսով
ըլլայ այս մեծ տօնախմութեան
սկզբնաւորութիւնն:

Բուն աշխարհանդէսը 1895
Մայիս 1ին պիտի բացուի և մինչև
նոյն տարւոյ Հոկտեմբերի վերջին
օրը շարունակէ: Գաղաքացիներէ
ստորագրուած տասն միլիոն տոլար
դրամագումար արդէն պատրաստ
կայ իլլինոյ Նահանգի կողմանէ ընտ-
րեալ Տեսչաց Խորհուրդի մօտ, որ
քառասուն և հինգ անդամներէ կը
բաղկանայ, և որք սոյն ցուցահան-
դէսը պատրաստելու և վարելու
պաշտօն ունին: Իսկ սոյն խորհուր-
դին ամենակարեւոր գործերը որք
ընդհանրութեան կը վերաբերին Մի-
ութեան ամեն Նահանգները և գա-
ւառները ներկայացնող Ազգային
Յանձնաժողովը մը վերատեսչու-
թեան ներքեւ են և նորա վաւե-
րացմանը կը կարօտին:

1895ի Աշխարհանդէսը Հին
Աշխարհի մէջ տրուած նմանօրինակ,
միջազգային ցուցահանդէսներէն սա-
տարեբարութիւնն ունի որ սորա
ծախքը փոխանակ ազգային եկամու-
տէն հոգացուելու անհատական հան-
գանակութեամբ հոգացուած է, և
փոխանակ կառավարութեան պաշ-
տօնէից քաղաքացիներէ բաղկացեալ
կազմակերպութեամբ մը պիտի վար-
ուի:

Բայց և այնպէս, կառավարու-
թիւնը այս գործին վերատեսչու-
թիւնը Գօնկրէսն ընտրեալ Յանձ-
նաժողովի մը յանձնելովը և նորա
մասնակցելու համար՝ օտար ազգաց
հրաւիր կարգաւորը զանի իւր գե-
րիշխանութեան և պատասխանա-
ւորութեան ներքեւ առած է:

Գօնկրէսի վճռովը աշխարհան-
դէսի տեղին Ձիգաօ քաղաքին մէջ
ըլլալ որոշուած է: Ենթերու ճիշդ
ու ճիշդ տեղերը Տեսչայ Խորհուր-
դին և Ազգային Յանձնաժողովի կող-
մանէ որոշուած են: Ամբողջ տեղը
երկուքի բաժնուած է: զանազան
չէնքեր Միջիկան Լճեկերաց վրայ
քաղաքին կեդրոնին մօտ պիտի
կանգնուին: Իսկ ուրիշներ՝ քաղաքին
հարաւակողմէն եղող մեծ պարտիզի
մը մէջ:

Այս մեծ աշխարհանդէսի ամե-
նահետաքրքրական բաներէն մինպի-
տի ըլլայ նոյնիքն Միացեալ Նահան-
գաց կառավարութեան ընելիք ցոյ-
ցն, որոյ ամար Գօնկրէսն արդէն մէկ
ու կէս միլիոն տոլար յատկացուցած
է: Կառավարութեան ամէն ճիւղե-
րը և նորա պահած ամէն հաստա-
տութիւններն, ինչպէս են Սմիթհ-
սոնեան ձեմարան և Ձիան Յանձնա-
ժողով, այդ նպատակին համար
կանգնուած չէնքի մը մէջ պիտի
պատկերակցուին:

Կարգադրութեան իւրաքանչիւր Նա-
հանգ և Գաւառ զատ ներկայաց-
ուելու համար. և մի նոր յատկու-
թիւն մը ալ աւելցուած է օրինօք,
« կարգադրի տիկնանց » խորհուրդ
մը հաստատուելովն, որ ազգային
Յանձնաժողովի կողմէն պիտի կար-
գուի, գեղարուեստից և արհեստից
մէջ կանանց մասը ըստ պատշաճին
ներկայացուելուն մասնաւոր հոգ
տարուելու համար:

ԿՈՒՑՈՒԻ ՄԻ ԳՐԱԾԱՐ ՈՐ ԿԱ-

րենայ շարի Անգղիային լեզուա-
նի մէջ Հայաստանաց Եկեղեցւոյ
գրասենեակը, 19 Բարը Բիշոյս,
թիւ 12:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ.

Էջմիածնայ Արարատ պաշտօնա-
կան ամսաթերթը կը ծանուցանէ թէ
Դեկտ. 27ին ձեմարանի նախկին ու-
սու իշ Պ. Մկրտիչ Պալեան իւր ըն-
տանիքով թողնելով կաթողիկոս-
ութիւնը, յօժարաւոր ցանկութեամբ
մտան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ
ծոցը:

Թիֆլիսէն և էջմիածնէն հա-
ւած վերջին տեղեկութիւններ կը
հաւատարմութիւն ամենայն Հայոց Հայ-
րապետ Մակար Սրբազան քաջա-
ռողջ կը գտնուի: Հետեւաբար անհի-
մըն էր Ն. Ս. Ծծուկեան ծանրա-
պէս հիւանդացած ըլլալուն լուրը
զոր Կովկասի լրագրագ ոմանք հրա-
տարակոծ էին:

Գում-Գաբուի Մայր Եկե-
ղեցւոյ աւագերէց և լուսարարապետ
Տ. Սուքիաս քահանայ Ստեփանոս-
եան ի Տէր հանգչած է Փետր. 26ի
առաւօտուն: Ի հանգիստ հանգու-
ցելոյն հոգւոյն Ս. Պատարագ մա-
տուցած է Պատրիարք Աշգեան Սր-
բազան:

Կոստանդնուպոլսոյ Արե-
ւելքէ կը տեղեկանամք թէ ամե-
նայն Հայոց Վեհ. Հայրապետը խաչ
մը շնորհած է Ամերիկայի Հայոց հո-
գեւոր հովիւ Արթ. Յ. Ս. Վար-
դապետ Սարաճեանի, ի վարձատ-
րութիւն նորա ծառայութեանց:

Ազգային Կեդրոնական Վար-
չութիւնն Երկրորդից այցելու հո-
վի կարգած է գլխաւորապէս Խորէն
Արքեպիսկոպոս Լուսինեան, իսկ նոյն
վիճակի ընդհ. Ժողովն առաջնորդ
ընտրած է զՍրբապետ իւթիւնեան, Ե-
րկրորդի ազգայնոց մէջ այժմ եր-
կու հանրագրութիւններ ստորագր-
ուելու վրայ են: Ինչ Խորէն Սրբազա-
նի հովիւութիւնն ինքնորդ, իսկ միւսն
Գէորգ վարդապետի ընտրութեան
գործադրութիւնն պահանջող:

Բարեկու մէջ Հայաստանեայց
Եկեղեցւոյ վերաբացման առթիւ, կը
ծանուցանէ Լօնտընի Արմէնիա, Իշ-
խան Կ. Լուսինեան, ընտրի մի ճա-
ռի մէջ յիշած է սա խօսքերը.
« Այս Կառուր մեզ միայն կեդ-
րոն մը, և մեր սիրելի և ապերջա-
նիկ հայրենեաց նշանակ մը պիտի
ըլլայ: և միշտ մեզ յիշեցնէ թէ մեր
առաքելական եկեղեցին է որ մեր
ազգութիւնն ի պահած ու պահա-
ւած է, հակառակ այն ամեն աշ-
խարհական հաւածանաց որք սպառ-
նացած են Հայկեան ցեղին դէմ: »

ԽԱՌԵՐ ԼՈՒՐԵՐ.

Ամսոյս 18 թուականաւ Կոս-
տանդնուպոլսէն հեռագիր մը կը
ծանուցանէ թէ Նազեփ Էֆենտի
զանգայնց պաշտօնաւ կարգուած է
փոխանակ Յակոբ Բաշայի, որ հրա-
ժարած է:

Ամսոյս առաջի երեք օրերը
առատ ձիւն անդաւած է ի Կոստան-
դնուպոլսի և Եւրոպական Թուրքիա.
այնպէս որ քաղաքին մէջ Թրամվէյի
և դրսերը կառավարեց երթեկու-
թիւնը դադարիլ պարտաւորած են:

Փետր. ամսոյ 5ին մի երկ-
րաշարժ պատահելով Վանայ մէջ
շատ տուներ իլած են: Նոյնպէս և
շարժն զգացուած է Բաղէշի և Արծ-
կէի կողմերը: առաջին մէջ 25 իսկ
երկրորդին մէջ իւր 24 տուներ մե-
ծապէս զնաւուած, և 4 կամ 5 ան-
ձինք մեռած են:

Լօնտընի Արմէնիայի մէջ կըն-
թեռնուած թէ Սուլթանը 40,000
Դուրը հեծեալազորաց խումբ մը կազ-
մել որոշած է, Մուսա Պէյի ազգա-
կաններն և կողմակիցներն տասն և
եօթն ցեղապետներ Մայրաքաղա-
քն հրաւիրած են Դուրը հեծեալ-
ազորաց զորաբաժնով մը:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ:

Լա Կուր կամ Ինքիլեկա կոչ-
ուած համաձայնակ հիւանդութիւնն
վերստին տիրել սկսած է Մէլտրա-
պոլսիս մէջ, ինչպէս նաեւ իւր ան-
փափաքելի այցելութեան լուրերն
սկսած են հասնիլ Աշգեանեան ե-
զերաց ուրիշ քաղաքներէ:

Մեծ յուզում տիրած է վեր-
ջերս Նոր Օրլէանի մէջ: Ոստիկանա-
պետ Հինգսթոն սպաննողներն և նոցա
արքանականներն կառավարած Իսա-
լայներ, որք պիտի յաջողին խու-
սափել օրինաց խստութեան իրենց
հայրենակ, ած աշխատանք և թերեւ
կաշառատութեամբ, բայց տեղոյն
քաղաքացիք չի կարենալով իրենց
զայրոյթն զսպել բանտին վրայ յար-
ձակելով նոցա ինն հատն գնդակի
հարուածներով տապալած և երկու-
քն հրապարակաւ կախած են:

Այս բանս բաւական գոտու-
թիւն պատճառած է Թատլոյ և Մի-
ացեալ Նահանգաց կառավարու-
թեանց միջև: Եւ առաջինն կ'ապառ-
նայ Խաղաղոց ի Միացեալ Նահան-
գս գաղթումը արգելել:

ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՏԱՐԵԴԱՐ
ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈՒԹԵԱՆ
ՅԱՄԵՐԻԿԱՅ:

Ի գիտութիւն Գաղթակա-
նութեան կը ծանուցուի որ Հայ-
կական Միութեան հաստատու-
թեան հինգերորդ Տարեգարծն
պիտի տօնուի Ծառաթ օր Ապրիլ
25, երեկոյեան ժամը 8ին, Խաղ-
րոյ Սրար Սրահին մէջ, մի ըն-
կերական հանգիսի:

Կը հրաւիրուին ամէն աղա-
յինք իւրենց ներկայութեամբ
պատուել արք երկրորդ:

Ի դիմաց Կարգադիր
Յանձնախմբին
վան փարտուղար
Փ. Մ. Ս. Ս. Ս. Ս.
Նիւ-Եօք Մարտ. 26, 91

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄ
ՀՈՐԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ
ՀԱՍՏԱՏԱՆԵԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ
Ի ՆԻՈՒ ԵՐԻՔ:

Ի գիտութիւն քաղաքի և չը-
ջակայից Հայ գաղթականաց կը ծա-
նուցուի որ Հոգաբարձութեանս
գրասենեակն հաստատուած է ի 19
Բարը Բիշոյս, թիւ 12 սենեակը:

Հ. Ե. Հոգաբարձութեան հետ
ամէն գործ ունեցողներ պէտք են
գիմել ի յիշեալ գրասենեակին:

Ճամբորդ ազգայնոց ամէն դիւ-
րութիւնը կը ծանուցուի, և անգործ
ազգայնոց զբաղմունք հայթայթե-
լու ջանք կըլլան:

Պաշտօնական ժամերն են 9
մինչ 12, առաւօտեան, և 15 մինչ 4
երեկոյեան:

Նիւ-Եօք, Մարտ. 16, 1891.
Ի Դիմաց Հոգաբարձութեան,
Փ. Մ. Ս. Ս. Ս.

(Կնիք) Առեւտրապետ
Մարտիրոս Գ. Աթիսեան,
Քարտուղար:

Հ. Ե. Ք. Ը.

Հայ Երիտասարդաց Քրիստոնէ-
ական Ընկերակցութեան ամսօրեայ
ժողովը պիտի ըլլայ յառաջիկայ Ծա-
ռաթ, Մարտ 28, ժամ 8 երեկոյ-
եան, թիւ 40 իսթ 23 րդ փողոց:
Պիտի ատենախօսէ Տ. Մ. ՉԱ-
ՄԱԼԵԱՆ. Նիւթն է, Հատնաւոր
Գիտելիք:

Ամէն Հայ երիտասարդք յար-
գանօք կը հրաւիրուին ներկայ գըտ-
նուիլ:

Մ. Չամալեան.
Առեւտրապետ:

ՀՐԱԿԻՐ ԱՌԱԶԳԱՅԻՆ

ՀՈՒՐԶ ԽՈՐՀՐԴԱՄՈՒԹԻՒՆՔ:

—Չար անձ մը ինքն իւր գերեզմանը կը փորէ:
—Եթէ ուղիղ զգալ կուզես, ուղիղ գործէ:
—Սենդ մը կը կարծէ թէ իրաւունք ունի, որովհետեւ բաւական հեռատեսութիւն չունի:
—Աշխարհիս մէջ ամենալաւ բանն է կատարեալ քրիստոնեայ մը ըլլալ:—Ֆիլիք Պրոքս:
—Ճանապարհին կեդրոնը մի կենար, եթէ ուղղեւորաց կարգին չես վերաբերիր:
—Հազարապատիկ լաւագոյն է տառապիլ բան թէ մեղանշնը:
—Ապրելու արհեստն է գիտնալ թէ ինչպէս քիչ վայելելու է և շատ համբերել:

ԱՐՆԵՍԱԿԱՆ

Ֆիլիք Պրոքսի թիւ 1-ը:—Ֆիլիք Պրոքսի թիւ 1-ը իր ամբողջական կամ լրացողական տպուածներն ապակւոյ վրայ փոխադրելու արհեստն է: Ֆիլիք Պրոքսի թիւ 1-ը, որ սլէքիքի ասիտի հետ միասնալ կը բաժնէ ջրա-Ֆիլիք Պրոքսի թիւ 1-ը, և այս վերջինը ապակին ուտելով կարտագրէ տիպէ: Լուստիտի հետեւալ բաղադրութեամբ պէտք է մեղանշնը:

Կրամ.	
Աճառ	50
Կիւրքի	200
Ճարպ	50
Ջուր	100
Պորաքս	23
Ֆիլիք	50
Ճրագի Սեւ	15

Նեկամիւն կառնուի և ապակւոյն կը փոխադրուի: Այս վերջինը մեղանշնը եղբրով մը կը շրջապատուի և Պոմի 64 կամ 65 աստիճան խոտիկեղան սլէքիքի ասիտով կը շաճուի: Տասն և հինգ կամ քսան վայրկեանէ վերջ ապակին ջրով կը լուացուի և ըսծասի լուծմամբ մը կը մաքրուի, յետոյ նորէն ջրով լուացուելով լաճով մը կը ջրացուի: Երկուսը շրջապատուելէ և Ակիւրով կը շաճուի և ապա անանիս արգիւնք յառաջ կը բերէ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ.

ԱՄՊՈՑ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆԸ:—Բըրօֆ. Մօլլըր, ի Գարիսոնէ, հետեւեալ գիտութիւններն ըրած է ամպերու վրայ:
Ամենաբարձր կամ լայնատարած ամպերը առ հասարակ մինչև 30,000 ոտք կը բարձրանան: Միջնակարգ ամպերը 10,000 մինչև 25,000 ոտք բարձրութեան մէջ կը մնան: Իսկ ստորակարգ ամպերը՝ 3,000 մինչև 7,000 ոտք բարձրութեան մէջ:
Ամպաղէղք իրենց ստորին մասի կերելով 4,000 մինչև 5,000 ոտք բարձրութեամբ կը ծածանին, մինչդեռ իրենց գլուխները մինչև 16,000 ոտք կը բարձրանան:
Ապակեանց զազաթները յաճախ երրորդ կարգի ամպերով ծածկուած են, բայց երկրորդ կարգի ամպերուն յատուկ և մասնաւորաբար որոտ-ամպերը զանոնք կը շրջապատեն: Բրօֆ. Մօլլըր նէթլէրկի վրայ, 3,700 ոտք բարձրութենէ գիտեց թէ, լեռան զազաթէն շատ վեր միջնակարգ ամպեր կը ծածանան և նոցա ունայնութեանց և ճեղքերուն մէջ խտացեալ խոնաւութեան քողեր կը տեսնուէին:
Վերին ամպերը երթալով խտաւալու վրայ էին, իսկ վարինները լուծուելով վրայ, և քիչ յետոյ անձրեւել և ձիւնել սկսաւ:

Պր. Ընթերցասէր:—Ինչ անհասկնալի լեզու է որ Պր. Գրասէր կը գործածէ իւր գրութեանց մէջ, գրածներն ըստ չեմ հասկնար:
Պր. Անկեղծ:—Այդ նպատակաւ չէ գործած:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

Յ՝ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ.

Արգիւնք Ուսուցիչի մէջ կատարուած Հանգանակութեանց. վասն շինութեան Ս. Փրկիչ Եկեղեցւոյ:
Տե՛ս Արարատ Թիւ 6.
ՅՈՒՑԱԿ Բ.

Փոխադրեալ գումար 1511,90

Պաղտասար Սաչատուրեան	2,-
Սրապ Գարբիէլեան	5,-
Դաւիթ Գարբիէլեան	5,-
Սարգիս Շաղալեան	10,-
Սարգիս Թիւֆէնկեան	7,-
Մհեր Սարգիս Չիքուշի	2,-
Միքայէլ տր. Յովհաննէսեան	7,-
Սարգիս Գ. Մարութեան	8,-
Քէրովր Ս. Տէմուրճեան	5,-
Սիմէոն Տէր Շուշանեան	6,-
Յովսէփ Տէր Վահանեան	2,-
Յակովբ Ե. Էքեղեան	5,-
Մկրտիչ Թէրզիպեան	6,-
Ասլան Մարտիրոսեան	1,-
Մկրտիչ Թովմաճանեան	5,-
Կրպտ. և Յակոբ Ժամկոչեան	15, 10
Արեան Սէֆէրեան	1,-
Գէորգ Ժամկոչեան	5,-
Գրիգոր Սալաճեան	2,-
Յարութիւն Տր. Պողոսեան	4,-
Գէորգ Սաւանի	2,-
Ջաքար Ֆէրմանեան	5,-
Ստեփան Ամիրայեան	1,-
Դաւիթ Ղազար Չափուշեան	6,-
Պետրոս Պաղտիկեան	1,-
Պետրոս և Ասատուր Մալ-խասեան	1,-
Գրիգոր Ղազար Չափուշեան	5,-
Մանուկ Ռըստիկեան	2,-
Գէորգ Ռըստիկեան	50
Կարապետ Պոյաճեան	25
Պետրոս Գէորգեան Սիւնուցի	150
Էլմա Գարսեան	1,-
Ահարոն և Յակոբ Դ. Ժօր-ճօրեան	10,-
Յարութիւն Նալպանտեան	7,-
Սաչատուր Քէնտէրեան	1,-
Մկրտիչ Սրապեան	15,-
Եղաւթ Թ. Իւլէկ	4,-
Գէորգ Երեմիանեան	5,-
Յակոբ Աղամեան	0,-
Յակոբեան Սողկիկեան	2,-
Յակոբ Տէմուրճեան	1,-
Համբարձում Մհեր. Մար-գարեան	1,-
Յով. Մհեր Գէորգեան	1,-
Սարգիս Սալաճեան	50
Յովհանն Աճուրեան	50
Սարգիս Տր. Գարբիէլեան	2,-
Մհեր Մամա Մարգարեան	7,-
Գրիգոր Ռըստիկեան	5,-
Կարապետ Թէրզիպեան	5,-
Աւետիս Սալաճեանեան	2,-
Միսա Չամանիկեան	5,-
Յով. Ղազար Չափուշեան	1,-
Կարապետ Դանիէլեան	7,-
Սահակ Առաքելեան	2,-
Ասատուր Բաշոյեան	1,-
Յովհաննէս Ասլանեան	1,-
Պողոս Քէչիկեան	2,-
Մհեր. Ասատուր Դանիէլեան	1,-
Սարգիս Կիրակոսեան	1,-
Մօրէնիկցի	1,-
Մկրտիչ Կոնճօեան	1,-
Գէորգ Սրապեան	1,-
Նիկողոս տէր Յակոբեան	50
Յովհ. Պոյաճեան	50
Սալաճեան Մակարեան	50
Գրիգոր Սրապեան	50
Յակոբ Մակարեան	50
Ստեփան Թորոսեան	25
Սալաճեան տէր Յուսիկեան	50
Յովհանն Բարոյեան	1,-
Յովհաննէս Ջարգարեան	1,-
Յովհաննէս Պողոսեան	2,-
Սարգիս Վ. Սրապեան	8,-
Յով. Պետրոսեան Սոփոյի	1,-
Մարտիրոս Գրիգորեան	1,-
Սմբատ Սրապեան Մէլքիցի	2,-
Սաչատուր Յարութիւնեան	1,-
Հաճի Պապ Զաղաքացի	5,-

Փոխադրեալ գումար 1551

Փոխադրեալ գումար 1551, 0

Պետրոս Պաղտիկեան	1,-
Մկրտիչ Պոյաճեան	1,-
Օհան Գէորգեան	1,-
Սարգիս Մկրտիչեան	1,-
Ահարոն Աւետիսեան	2,-
Պողոս Միսնաեան	7,-
Կարապետ Միքայէլեան	5,-
Յակոբ Վարդանեան	1,-
Պապ Գարբիէլեան	5,-
Սարգիս Օհանեան	4,-
Գասպար Բարոսեան	50
Սալաճեան Սրապեան	50
Տիգրան Շուշանեան	5,-
Եղիա Կէօճիկեան	1,-
Արաճաճ Թէրզիպեան	1,-
Մօզովր Պօրթիկեան	1,-
Աղապապ Պարսաւեան	5,-
Մարգար Տէր Կարապետեան	5,-
Եղիազար Մհեր. Գրիգորեան	1,-
Մարտիրոս Պաղտիկեան	4,-
Ասատուր Սրապեան	5,-
Գէորգ Դանիէլեան	10,-
Հաճիցի	1,-
Միքայէլ Ասատուրեան	1,-
Շընթըցի	1,-
Յակոբ Ստեփանեան	1,-
Յովհաննէս Վարդեան	2,-
Մկրտիչ Մուսնիսեան	2,-
Պողոս Մկրտիչեան	1,-
Համբարձում Օհաննէսեան	1,-
Ջաքար Կարապետեան	2,-
Միսա Սահակեան	1,-
Մարտիկ Մարտիրոսեան	1,-
Գէորգ Մկրտիչեան	1,-
Յովհաննէս Յովսէփեան	5,-
Կարապետ Տէր Դաւիթեան	5,-

Գումար 1551, 50

(Շարունակելի)

— «Կարծեմ թէ» ըսաւ խմբագիր մը, «լրագրագետութիւնն պիտի թողում և աստղագիտութեան հետեւի»:
«Ինչո՞ւ համար»:
«Որովհետեւ աստղագիտութեան մէջ աւելի ընդարձակ աւարտէք մը կը նշմարեմ»:
— 0 —

ՊԱՆԴՈՒԹԻՒՆ ՄԵՋ.

Առաջին Հիւր.—Այդ պարոնին վրայ խօսած ատեննիք ինչու «Նորին Բարձրութիւնն» բառերով կը յիշէք զինքը:
Երկրորդ Հիւր.—Որովհետեւ նա այս պանդոնին տէրն է, երբ ձեր հոգին վճարելու երէք աւելիման բոստանօրէն կը հասկնաք:

ԱՂԻ

Հ. Էփենքան, Հայերէն միակ Տպագրիչ Միացեալ Նահանգս, պատիւ ունի ծանուցանել թէ յանձն կ'առնէ տպագրել ամէջ տեսակի Հայերէն և Անգլ. գործ մեծ կամ փոքր քանակութեամբ: Տպագրութեան մաքրութիւնն և աժանութիւնն կարելի չէ գերազանցել. իր նիւ Երբեք մէջ ձուլել տուած Հայերէն ընտիր տառերն բաւական են մեծկակ հատորներ տպագրելու: Գիրք, տետր կամ ո՛ր և է տպագրելի բան ունեցող ազգայնոց ուշադրութիւնն կը հրաւիրուի այս մասին:

B. H. TASHJIAN & Co.,
100 Centre St
New York.

BOOK AND PAMPHLET BINDERS
CLOTH & PAPER BINDINGS,
MAGAZINES,
Reviews and Newspapers bound and mailed. Estimates furnished cheerfully.

"The ARABAD"

No. 100 Centre Street, New York.

ADVERTISING RATES.

Inches.	1 Month.	3 Months.	1 Year.
1	\$ 2.00	\$ 5.00	\$16.00
2	3.50	8.00	25.00
3	5.00	11.00	35.00
4	6.00	14.00	45.00
5	7.00	17.00	55.00
6	8.00	20.00	65.00
7	9.00	23.00	75.00
8	10.00	26.00	85.00
1 Col.	11.00	29.00	95.00
1 Col.	20.00	55.00	180.00

Per Line (Agate) 15 cents each issue.

The above prices are for the first and last pages only. Ten per cent additional for the third page, next to reading matter.

Ս. ՕՀԱՆՆԵՍԵԱՆ.

Արեւելեան և Տեղական Նպարեղեններ:

59 Ուաշինգթօն և 216 Էլտրիճ Փողոց.

Սոյն խանութներու մէջ կը վաճառուի մասնաւոր խնամք և Պօլսէ բերուած Արեւելեան մէջ տեսակի նպարեղենք. Աղճեղէններ, ընտիր Պտուղներ, Ամերիկացոց ախորժիկի ու նուէրի արժանի Անուշեղէնք, զանազան բնորոշ գինիներ ու օղիներ, նաև Տաճկական Գաւալայի առաջին կարգի ծխախոտէն շինուած սիկարէներ:
Յանձնարարութիւնք ժամանակին խնամք կը կատարուին, և յաճախորդներն գոհացնելու համար ամէն ջանք ի գործ կը դրուին:

Mrs. Winslow's
Soothing Syrup.

Տիպ. ՈՒՆԵՂՈՒ ՈՂՈՒԹՅՈՒՆ ՕՇԱՐԱԿԸ.

Յիսուս տարիներէ աւելի է որ Տիկին Ուինսլօ Ուոքիչ Օշարալը միլիոնաւոր մարդիկ կը գործածուի իրենց զաւակաց անուայ հաճելու ժամանակ: Գիշերները կը խանգարուի և հանգստութիւնն իր կը վրդովուի անուայ հանելու ցաւէ հիւանդ, տառապող և լացող զաւակէ մը, եթէ այդպէս է, անմիջապէս Ակուայ Հանոց Մանկանց համար «Տիկին Ուինսլօ Ուոքիչ Օշարալ» էն չիւ մը առէք: Սորա արժէքը անհամար է. ինչպէս զարտի տառապանքն անմիջապէս դարման մը պիտի ըլլայ: Մայրի՛ր, ասոր վրայ կրնաք ապաւինել. բնաւ սխալ չի կայ: Կը բժշկէ Փոքրեւոր թիւն, կը կանոնաւորէ Ստամոքսը և Աղիքները, կը բժշկէ Աղեաց իր-թը, կը կակցցնէ Լիւնտերը, կը նոզուագեցնէ բորբոքումն, և ամբողջ կազմուծը կը կազդուրէ և կը զօրացունէ: Ակուայ Հանոց մանկանց համար «Տիկին Ուինսլօ Ուոքիչ Օշարալը», ճշգրիտ հաճելի, և Միացեալ Նահանգաց մէջ ամէնէն հին և ամենալաւ բժշկուհի և անուշիղէններէ մէկուն զեղազրին է, և կը ծախուի աշխարհիս ամէն գեղազորներու քով, իւրաքանչիւր չիւ չի գինն է քանն և հինգ սենթ: Ուզեցէք միայն:

"Mrs. Winslow's Soothing Syrup."

If YOU WISH
to Advertise
Anything
Anywhere
at Any time
WRITE TO
GEO. P. ROWELL & Co.
No. 10 Spruce Street,
NEW YORK.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՄՈՒՄՆԱԿԱՆ.

ԱՂԻ

Եկեղեցական եւ գիտութեան գործերու վերաբերեալ Հայերէն լեզուաւ ծանուցմունք, որը երկու մասունաւ անուայ տեղի տեղ չեն բռներ, Թերթիս մէջ ծրի պիտի հրատարակուին:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՈՒՂԱՓԱՌ ՍԲ. ԵԿԵՂԵՑԻ

St. Chrysostom's Chapel,
[Trinity Parish.]
Corner 39th Street and 7th Avenue.

Ի գիտութիւն բարեպաշտ ժողովրդեան կը ծանուցուի որ առաւօտեան ժամերգութիւն կը կատարուի ի վերջիւ Մարտի, ամէն Կիրակէ ժամը 1.30 ին յետ միջառուր:
Ի Դիմաց Հոգարարձութեան, Հ. Էփենքան, Փ Մ.ԱՅՎԱՏ, Գարաւալար, Ատենապետ:

ՍՈՒՐԲ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
Ի ՆԻՒ ԵՐԻՔ:

Յառաջիկայ Մ. Չառիկ Կիրակի օր ի Կրէյս Մարտի (Պատուէյ և Տասներորդ փողոց) Եկեղեցւոյ Պաշտամունք պիտի կատարուի ի ժամ երկուք ու կէս յետ միջառուր:
Յարգանք կը հրաւիրուին ամէն Հայք ներկայ գտնուիլ սոյն Պաշտամունք:

Նեւտոն Մետրոպ Պոլսեան
Գարաւալար:

ՍՈՒՐԲ ԲԱՐԹՈՒՂԻՄԷՈՍԻ
ԱՆԳՂ. ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱՇՏՄԱՌՆԱԿԱՆ
ՅԷՔԻՓԷՆԻ ԵԿԵՂԵՑՈՂ:

47րդ Փողոց, Լէֆտիկըն եւ Բարք Ալընի ներս միջուղի:
Պաշտունեայ—Արք. Յովհաննէսեան. Դասախօսութիւնն կսկսի, յետ միջառուր, ժամը 3ին, եւ կ'առնական Պաշտամունքն ժամը չորսին, Կիրակէ օրեր:

ՆՈՐ ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ.

Կ Ս Կ Ծ Ա Ն Ք
Գրեց
Հ. Էփենքան.
Հեղինակին ընտիր մէկ բանաստեղծութիւնն է այս արձակ գրութեամբ, որ կը վաճառուի խմբագրութեան քով հաւաք 15սենթի:

ՀԱՆԴԻՍԱՐԱՆՔ

Բ Ա Ձ Մ Ա Վ Է Պ
Ամսամերթ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ
ԽՍՐ. Տարի, 1891.
Ուրեկան բաժանորդագիրն է տաւր Փր. (Գրուրի). Հասցէն
Redaction de la revue "Basmavep"
Venise, Italie, St. Lazare.

«ՀԱՆԴԻՍԱՐԱՆՔ»
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ,
ԱՐՈՒԵՍԱԿՈՒԹԻՒՆՔ.
Ե. Տարի 1891.

Տարեկան բաժանորդագիրն է
1 Յր. (Գրուրի). Հասցէն
Redaction de la revue "Hantess"
Vienne (Autriche)
VII Mechitaristengasse, 4.

Ա Ր Մ Է Ն Ի Ա.

Հունգարեան Ամսամերթ.
ՊԱՍՏԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Բ. Տարի 1891.
Տարեկան բաժանորդագիրն է
10 Յր. Հասցէն
Szongott Kristoff urnak,
Szamosujvar (Hongrie).

—ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Հ. Էփենքան—